


ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ  
Ե. ԹՈՐՕՏՏԻԱՆ

Նամակ կամ որ եւ է  
գրութիւն պէտք է ուղղել առ  
Տնօրին ԱՐՇԱԼՈՅՍ Իրագրի  
ԳԱՂԻՔ (Եգիպտոս)

E. TOROSSIAN  
Direc. propr. du journal arménien  
ARCHALOUICE  
LE CAIRE (EGYPTE)



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԿԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դրամներ	60
Վեցամսեայ »	35
ՕՏԱՐ ԵՐԿՐԵՆԵՐ	
Տարեկան Տրամք	20
Վեցամսեայ »	12

Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ ԿԱՆԻՅԻԿ  
Եւ թղթատարի ծախքը  
Խոնարարութեան վրայ է :

Խոնարարութեան ուղղուած  
գրութիւնք եւ չ'են տրուիր

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ  
Կանխիկ վճարելի են

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԳ

ԱՐՇԱԼՈՅՍԻ Պատ. բաժանորդներէն  
կը խնդրուի, իրենց ԵՐԿՐՈՐԴ տարւոյ բա-  
ժանորդագիրը որ կը Տնօրինութեան հաս-  
ցէին :

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ Պատ. բաժանորդներէն  
աչ ջերմասպես կը խնդրուի, որ բարեհաճին  
նախորդ տարիէն մնացեալ պարտոց կցե-  
լով որ կը նստէ իրենց ԵՐԿՐՈՐԴ Տարեջրա-  
նի բաժանորդագիրը, եւ հարկ չը քողոյ  
մասնաւոր դիմումներու, որով նոր դրժ-  
ուարութիւն մը պիտի ըլլան ԱՐՇԱԼՈՅՍԻ  
արդէն բազմազարդ Տնօրինութեան :

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ

Ե .

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔ

Արարողականութեան, ապականութեան  
հոլը, որ կը փչէ երկրագունտի վրայ ար-  
մատախիւ ընկելով ինչ որ բարի է, ինչ որ  
գեղեցիկ է, ինչ որ ճշմարիտ է, մեզ ալ  
խորշակահար կ'ընէ, կը թառամեցնէ :

Ի՞նչ է այժմու ընտանեկան, մանա-  
ւանդ ընտանեաց հօր կեանքը : Երբ ինք  
առտուրնէ մինչև իրիկուն սրճարաններու,  
գինետուններու անկիւնը բերանաբաց կը  
մնայ, բամբասանքներով կը հեշտանայ կը  
ծախսէ ու կը մսխէ, որպիսի իշխանութիւն  
կ'ընայ ունենալ խտտապահանջ ըլլալու իր  
կնոյ, դստեր, որդւոյն և նոյն իսկ ծա-  
ռային արդուզարդին, պահուստներն, ըլ-  
բօսանքներն, բարոյականներն մասին : Եւ սա-  
կայն բարւոյն, գեղեցիկն, ճշմարտին գա-  
ղափարը ընտանեկան յարկին տակ պիտի  
ցանուի մատղաջ, ճկուն սիրտերու մէջ :  
Հոն, այդ յարկն է « Հանրային կարծիքի »  
օրրանը :

Միթէ կարելի է պահանջել որ աշա-  
կերանները յարգանք, մեծարանք և բարի  
կարծիք ունենան ուսուցիչներու մասին, ու  
ընդմէ ոմանք գեղափոխութիւն սիրտերու և վը-  
ճիտ աչքերու առջև անամօթաբար կը ստեն,  
կը խայտառակուին, կը լկտիանան, և որոնց  
վրայ աշակերտը զանազան լրբութիւններ  
կը լսէ փողոցներու մէջ : Եւ սակայն բար-  
ւոյն, գեղեցիկն, ճշմարտին գաղափարը  
ուսուցիչներն մէջ պիտի ծլի անմեղ և

անբիծ հոգիներու մէջ : Ուսուցիչներն է  
« Հանրային կարծիքի » մկրտութեան աւա-  
զանը :

Իարավերջիկ հրապարակագրութիւնն է  
Այո՛ . արժանաւոր ընկեր այդ դարավերջիկ  
ընտանիքի, դարավերջիկ ուսուցիչներն է :  
Այդ հրապարակագրութիւնը շոյալբար կը  
բանայ իր էջերը իրապաշտ վէպերու, գայ-  
թակղեցուցիչ կացութեանց, շլացուցիչ մո-  
լութեանց, ակներև զրպարտութեանց, վա-  
տոգի շողքորթութեանց առջև, և կը մեր-  
ժէ կամ կը խեղաթիւրէ ինչ որ պարկեշտ  
է, ինչ որ կազդուրիչ է, ինչ որ առա-  
քինի (քիչ ատենէն անհետանալու սահման-  
ուած բառ) է, ինչ որ ճշմարիտ է, ինչ որ  
վսեմ է : Եւ սակայն հրապարակագրու-  
թիւնն է որ պիտի ոռոգէ և պիտի զօրացը-  
նէ սիրտերու մէջ բարւոյն, գեղեցիկն,  
ճշմարտին նորածիլ բողբոջը :

Հրապարակագիրն է որ պիտի ուռճա-  
ցնէ զայն, և իր ընթերցողաց սրտին մէջ  
պիտի պատրաստէ կոյս հող մը ընդունելու  
համար նորանոր գաղափարներ, զոր հոն  
պիտի ներմուծէ յեղափոխականք : Հրապա-  
րակագրութիւնն է « Հանրային կարծիք » ի  
ուսուցիչներն :

Յիրաւի վսեմ է Յեղափոխութիւնը մտ-  
քի և գաղափարի . դիւցազն մ'է այն ան-  
ձը որ անձուիրաբար կը ծառայէ իտէպի  
մ'իրականացման, որով նիւթական ամեն  
կապեր պիտի կտրուին և գաղափարը պիտի  
սլանայ ազատութեան անծայրածիր հորի-  
զոնին մէջ : Բայց այս դարավերջիկ ժամա-  
նակներ ու՞ր է այն վեհօգի անձնաւորու-  
թիւնը, որ ամեն ինչ զոհելով հրապարակ  
պիտի նետուի և Յեղափոխութեան անբիծ  
և անարատ դրօշակը վեր բռնած ազգին զա-  
ւակները պիտի առաջնորդէ գէպ ի բարին,  
գէպ ի գեղեցիկն, գէպ ի ճշմարտին : Յեղա-  
փոխութիւնն է « Հանրային կարծիք » ի սս-  
պարէզը :

Մոյն համառօտ տեսութիւնը մեզ կը  
հասցնէ սա եզրակացութեան թէ՛ մարդկու-  
թեան մէջ պատուաւոր տեղ մը գրաւելու  
համար պէտք է ուղղել մեր « Հանրային  
կարծիք » ը : Բայց այս արդիւնքին հասնե-  
լու համար նախ պէտք է խտտապահանջ ըլ-  
լալ մեր « Հանրային գործիչ » ներու մասին :

Եւ որպէսզի որ և է բազմախնդիր մը  
այդ անունով սքօղուած՝ աճապարտութիւն-  
ներ չ'ընէ հրապարակին վրայ, և բարեմիտ  
ժողովուրդը չ'դալթակղեցնէ, պէտք է քն-  
նադատել ամեն գործ, ամեն գրութիւն,  
որոնք առաւել կամ նուազ յաւակնութիւն  
ունին հանրային ըլլալու : Այս միջոցով խա-

բերաները կ'ստիպուին անհետանալու, և  
ճշմարիտ ժողովրդասէրները կրնան՝ առանց  
չարակամութեան բաղխելու՝ իրենց անկեղծ  
տեսութիւնը պարզել ժողովուրդին, միակ  
պաշտպանելի բայց՝ դժբաղդաբար՝ միշտ  
լքուած տարրին առջև :

ՀԱՐՍԱՆԻՔ

Անցեալ երկուշաբթի կէս օրէ վերջը Օթէլ  
Ռուսեալի մեծ օրանին մէջ պատշաճ չքով տե-  
ղի ունեցաւ ազգային հանրածանօթ ուսուցիչ  
ՏԻԱՐ ԳԱՌՆԻԿ ՍԻՐՈՒՆԵԱՆԻ՝ պատկազրութեան  
հանդէսն՝ ընդ ՕՐԻՈՐԴ ԱՐՏԵՄԻՍ ձ . ԹՈՒՄԱ-  
ԵԱՆԻ :

Համակրելի երիտասարդին բարեկամները  
ինչպէս նաեւ թուամեան ընտանիքին պարա-  
գայքը հոն ներկայ էին : Հանդիսականներուն  
մէջ կը նշմարուէին բաւական թուով օտարազ-  
գիներ եւս :

Կնքահայրն էր Ազն . Տիար Մեսրոպ Աղամ-  
եան : Պատի խորհրդին կատարման ատեն, և-  
րեք քահանաներուն կ'երգակցէին վարժարանի  
երգեցիկ մանկունք :

Արդարեւ սոյն հանդիսաւոր արարողու-  
թիւնն լաւ տպաւորութիւն մը թողուց օտար  
հանդիսականաց վրայ :

Կրօնական արարողութիւնը աւարտելուն,  
յանուն ազգ . վարժարանի պաշտօնէից պարա-  
գային յարմար ճառ մը կարդացուեցաւ . յորմէ  
յետոյ վարժարանի սաներէն կրտսերագոյն աշա-  
կերտ մը, ի դիմաց իւր ընկերացը, թոթով  
լեզուաւ՝ այլ անկեղծ ու սրտառու շեշտով մը  
ճառ մը կարդաց, որով ջերմագին բարեմաղթու-  
թիւններ ըրաւ սիրելի ուսուցչին :

Ապա հանդիսականները պատուասիրուեցան  
օջարակներով, շամբանեաներով : Նոյն միջոցին  
երաժշտաց խումբ մը գեղեցիկ կտորներ կը նը-  
ւագէր դուրսը :

Փեսան՝ որուն զուարթ ձախին վրայ կը  
ճառագայթէր երանութեան նշոյլը՝ իր սովորա-  
կան քաղցրաբարոյ բնաւորութեամբ կը մեծա-  
րէր հիւրերը . միոյն սիրագեղ ժպիտ մը, միւ-  
սին անուշ խօսք մ'ունէր միշտ պատրաստ շըր-  
թանցը վրայ : Նուագարանաց առաջին դադա-  
րին վարժարանի Տնօրէնը Տիար Յ . Սէթեան գա-  
ղիերէն լեզուաւ ճառախօսութիւն մը ըրաւ, ուր  
իւր բարեկամին եւ պաշտօնակցին ամուսնու-  
թեանն առթիւ բարեմաղթութիւններ ընելով  
գեղեցիկ կերպով պարզեց ամուսնութեան բար-  
ձր նշանակութիւնը ու վեհ նպատակը, ինչ-  
պէս նաեւ ընտանեկան յարկին քաղցր ու անմեղ  
հրապոյրները :

Բազմաթիւ ծաղկեփունջեր նուիրուած էին  
հարսին ու փեսին : Ազգային վարժարանի ու-  
սուցչական խումբը նուիրած էր գեղակերտ թա-  
նաքաման մը փղոսկրեայ ընտիր գրչակալով :

Մենք որ նորապսակ ամուսնուուն ազնիւ  
ձիւքերն ու անստգիւտ բնաւորութիւնը մօտէն

կը ճանչնանք, կրկին ուրախ ենք սոյն երջանիկ միութեան առթիւ: Ուստի իրենց յարատեւեալ անխառն երջանկութեան համար մեր ամենէն ջերմ և անկեղծ բարեմաղթութիւնները եւ ինքնակցութիւնը կ'ողղենք իրենց:

### ՊԱՏԵՐԱԶՍԻ ԴԱՇԵՆ

**ՉԻՆԱՑ ԿԱՅՍԵՐ ԵՄՄԱԿԸ.** — Ե. Վեհափառութիւն Չինու կայսրը կը բարեկէ Գերմանիոյ նորին կայսերական վեհափառութիւնը: Արդէն ցաւեցանք և ողբացինք ի խորոց սրտի նորին կայսերական վեհափառութեան պատգամաւոր Տը Բէթէր Պառօնին Չինաստանի մէջ յեղակարծօրէն պայթող խռովութեանց զոհ երթալը: Խռովութիւնք՝ զոր մեր պաշտօնակալները չ'կարողացան արգելել:

Այսօրուան հրովարտակով մը կարգադրեցինք որ հանգուցելոյն յիշատակին համար զոհեր մատուցուին զից: Կը հրահայնք առաջին քարտուղար Գունքանիի որ բարկաներուն գինեծօնք ընել տայ: Հիւսիսային և հարաւային նաւահանգիստներու վաճառականութեան գլխաւոր վերակացուները հաւասարապէս հրաման ստացած են հարկաւոր միջոցները ձեռք առնելու դազողը հանգուցելոյն հայրենիքը փոխադրել տալու համար: Գազաղը Գերմանիա հասնելուն կը հրամայինք նոյնպէս որ երկրորդ անգամ զոհեր մատուցուին զից: Այս առթիւ ելմտական նախարարութեան փոխ-նախագահ Լէօն-Հայ-Հուանը նշանակեցինք: Ասիկա պիտի արտայայտէ ուրեմն մեր յար և մեռեալին մեր քով ունեցած յիշատակը:

Գերմանիա միշտ Չինաստանի հետ խիստ բարեկամական յարաբերութիւններ մշակած է: Հետեւաբար կը յուսանք որ ձեր կայսերական վեհափառութիւնը ամեն բանէ առաջ պիտի պաշտպանէ Չինաստանի և միւս օտար պետութեանց հասարակաց մեծ շահերը, և ստոր հետեւանքով պիտի հրաժարի ամեն ոխակալութենէ որպէսզի կարելի եղածին չափ շուտ խաղաղութիւնը կարենայ ապահովել և ամենէն լաւը յաւիտենական միութիւն մը կարելի ըլլայ: Ասիկա մեր ամենէն խոր յոյսը և ամենէն սիրելի բաղձանքն է:

**ԿԻՅԵՕՄ Ի.** Հետեւեալ հեռագրով պատասխանեց.

« Չինաստանի Կայսեր .

« Ես Գերմանիոյ կայսրս, ստացայ ն. Չինական կայսերական վեհափառութեան հեռագիրը և գոհունակութեամբ հաստատեցի թէ ձեր վեհափառութիւնը ըստ ձեր կրօնքին սովորութեանցը և պատուէրներուն կը ջանայ քաւել տալ, իմ գեւապանիս գարշելի մահը, ոճիր զոր կ'արհամարհէ քաղաքակրթութեան համայն օրէնքները:

Բայց սակայն իբր Գերմանիոյ կայսր և իբր քրիստոնեայ չ'եմ կրնար գինեծօնքով մը այս ամենագարշելի ոճիրն քաւուիլը ընդունիլ: Իմ գեւապանիս սպանմանը հետ մեծ քանակութեամբ մեր քրիստոնէական կրօնքէն եղբայրներ, եպիսկոպոսներ, միսիօնարներ, կիներ, տղաքներ կան որոնք իրենց կրօնքին համար — որ իմ ալ կրօնքս է — Աստուծոյ գահը զրկուեցան, ամենասուկալի մահուամբ մը մարտիրոսութիւնը ընդունելէ ետքը . այս մարտիրոսները ձեր

կայսերական վեհափառութեան դէմ դատախազներ են, ձեր վեհափառութեան հրամայուած գինեծօնքները կը բաւեն արդեօք այս բոլոր անմեղներուն համար:

Ձեր կայսերական վեհափառութիւնը անձնականապէս պատասխանատու չ'եմ նրկատեր . ո՛չ այն յարձակմանց համար, որոնք գործուեցան գեւապանաց վրայ . գեւապանատունք՝ որոնք անբռնաբարելի են ամեն ազգաց մօտ . ո՛չ ազգերու դէմ եղած նախատանաց համար, և ո՛չ ալ այն հակակրօնական շարժումներուն համար, որոնց զոհ գացին նոյն իսկ ձեր կայսերական հրապարակներէն անոնք, որոնք իմ կրօնքս կը դաւանին: Բայց այն պաշտօնակալները որոնց գլխուն վրայ կ'իյնան այն ոճիրն յանցաւորութիւնը որ բոլոր քրիստոնեայ ազգերը ստեղծուած սարսուռ տուաւ պէտք է որ քաւեն իրենց ծանր յանցանքը, և եթէ ձեր վեհափառութիւնը իրենց արժանի եղած պատիժներ տայ իրենց, այս պատիժնեղ իբր քաւութիւն պիտի նկատեմ որ կը բաւէ քրիստոնեայ ազգաց:

Եթէ ձեր վեհափառութիւնը ուզէ այս գործին միացնել իր կայսերական աջակցութիւնը և հաւանի որ իրեն օգնեն բոլոր թշնամեալ պետութեանց ներկայացուցիչները, իմ կողմէն կը յայտարարեմ որ կը հաւանիմ: Պիտի ողջունէի յօժարակամ ձեր կայսերական վեհափառութեան իր մայրաքաղաքը՝ Բէթլէմ դաւանալը . իմ զօրավարս Ֆիլտ-Մարէշալ Վալտերսէ կոմսը հրաման պիտի ընդունի ոչ միայն ձեր կայսերական վեհափառութիւնը ընդունիլ ձեր աստիճանին, ձեր բարձրապատուութեան արժանի պատիւներով, այլև շրջապատել ձեր վեհափառութիւնը Չինական պաշտպանութեամբ զոր դուք կրնաք փափաքիլ և որուն կարելի է պէտք ունենաք ապստամբաց դէմ:

Ես ալ խաղաղութեան կը փափաքիմ. բայց այնպիսի խաղաղութեան մը որ ոճիրները քաւէ որ պէտք եղած տարածութեամբ գարմանէ կատարուած անարդարութիւնները և երաշխաւորէ Չինաստանի բոլոր օտարականներուն իրենց կեանքի, ինչքի և մասնաւորապէս իրենց կրօնքի ազատ դաւանման բացարձակ ապահովութիւնը:

**ՓԻԼԻՊԵՍՆՅ ՄԷՉ.** — Պ. Ակօնչիլիօ Փիլիպեան կառավարութեան պատուիրակը, Բարիզի մէջ մեր Բարիզեան պաշտօնակիցներուն կը հաղորդէ հետեւեալ հեռագիրը որ հոկտ. 6 ի առաւոյն ընդունած է:

Սէնիթանի մօտ մղուած պատերազմի մը մէջ, Ամերիկացիները 180 հոգի կորսնցուցին և Թակալները 26 հոգի, որոնց մէջ կը գտնուի նաև Տեղակալ-Ղենդապետ Ֆիտէլ, որ իր մարդոց գլուխը անցած, սուինի յարձակում մը կը կատարէր. մեռնելէ առաջ պօռաց. « գոհ սրտով կը մեռնիմ . պարտականութիւնս կատարեցի . կեցցէ Փիլիպեան կղզեաց ազատութիւնը:

Մանթա Գրուչ տէ Մարինտուգէի մէջ 52 հոգիէ բաղկացած Ամերիկեան պահակագունդ մը Փիլիպեանց անձնատուր եղած է: Բասէի, Բարանագի և Մանիլայի շքրջակայքի մէջ կռուները կ'սկսին դարձեալ կատարութեան կրկնումով: Մանիլայի Ամերիկեան Իշխանութիւնք մամուլին կ'արգելին այս կռուները մասին լուրերու հրատարակումը:

Իլօիլօի Ամերիկացի վերակացուն չափազանցուած տուգանքներ կը դնէ խաղաղ բնակչաց վրայ:

### ԱՂՕՏ ԼՈՅՍ ՄԸ

(Շարն. տե'ս 116 եւ 117)

Գ. Գարտուղարին ստորագրած ու ներկայած հաշուեկշիռը կը պարունակէր մէկէ աւելի զեղծումներ, — թողունք զեղծումներուն առաջինը, որ էր, եռամսեայ հաշուեկշիռն ուղղակի ընդէ. ժողովոյ սեղանին վրայ դրուիլը, սեպտ. 9. Ի նստին օրը, փոխանակ, ըստ ծրագրի զօրութեան, Գործ. ժողովոյ ներկայացուելու օրը առաջ — մանաւանդ ելից կողմը, վարչութեան կնքոյն համար 40 զըշ. Ի գումար մը վճարեալ նշանակուած է, մինչդեռ կնքը շինողը՝ Տիար Ե. Գարագաշ՝ միլիթէմ մ'իսկ չ'էր ընդունած մինչեւ Ֆետումի 35 զըշ. Ի հասանելուն թուականը: Այդ գումարին վրայ գնելով նաև 5 զըշ. արեւելեան մամուլ համար վճարուած տարեկան 65 զըշ. Ի գումարին մէջէն. Գործ. ժողովոյ ատենապետը վճարած է 40 զըշ. Ե. Գարագաշի:

Ե. Եւ որովհետեւ զեղծումներու վրայ է խօսքը, պէտք է ուշադրութիւն դարձնել Տիար Սմբատ Փափագեանի պատրաստած եռամսեայ հաշուեկշիռն մէջ վխտացող զեղծումներուն:

Ա. Խմբագրապետին՝ առաջին երեք ամբողջուն մէջ տիրանալիք իրաւունքին ի հաշիւ. Գործ. ժողովոյ գանձապետին ստացած 150 զըշի գումարը վճարեալ նշանակուած է Տիար Գարտուղար-Ներկայացուցչի կողմէն մինչդեռ սեպտ. 23 ի նստին մէջ գանձապետը Տիար Ե. Գարագաշին յայտարարեց թէ՛ ինք տուած էր այդ 150 զըշ. Ի գումարը. ահա՛ նիւթական զեղծում մը Տիար Գարտուղար-Ներկայացուցչի կողմէն գործուած, որ ընկերութեան պարտուց կողմը 300 զըշ. Ի հաշիւ մը կը բանայ:

Բ. Տիար Ե. Գարագաշի « Նոր-Օր » ի առաջին գլխի (1) հաշուէն գանձապետին ձեռքով վճարուած 40 զըշ. ը նշանակուած է Տիար Փափագեանի կողմէն վճարեալ, ահա՛ 80 զըշ. Ի պարտք մ'ալ ընկերութեան վրայ, շնորհիւ նոյն զեղծումին:

Գ. Տիար Ե. Գարտուղարին ցրուելին ամսականին ի հաշիւ՝ ընկերներէն Տիար Սեդրաք Օտապաշեանի բաժնեգիրներէն գոյացած 37 զըշի գումար մը նշանակուած է նոյն եռամսեայ հաշուեկշիռն մէջ նոյն զեղծումի ձեռով, ինչ որ 74 զըշի պարտք մը կը բարդէ ընկերութեան վրայ:

Դ. Խմբագրապետին՝ ընկերութեան գանձուն վճարած 8 զըշ ի բաժնեգիրը, որ կը վերաբարեբի Գործ. ժողովոյ, եռամսեայ հաշուեկշիռն մէջ նշանակուած է իբր վճարեալ Տիար Փափագեանի ի հաշիւ Խմբագրապետին իրաւանց. 16 զըշ ի պարտք մ'ալ:

Ե. Վարչութեան կնքոյն համար դեռ չ'վճարուած 40 զըշ ը նշանակուած է վճարեալ:

(1) Առաջին և երկրորդ գլխի բառերը պիտի զարմացնէին ոչ միայն մեզ՝ այլ և բոլոր ընթերցողները, բայց զարմանալու բան մը չ'ունինք հիմայ, քանի որ դիտենք թէ՛ առաջին գլխիէն դեռ Պ. Ս. Գարագաշեանի քով կ'սպասէ, « Նոր-Օր » ի 515 զըշ տպարանական պարտուց փոխարէն . կը յուսանք թէ՛ առաջնորդարանի գրագիրը Պ. Նազարէթ Աղազարմեան այդ Գլխիցաբանութեան մէջէն ալ պիտի կրնայ ճերմակերես դուրս ելլել, եթէ յաջողի Գարագաշեանը համոզել կէս վճարով ձեռքէն առնելու « Նոր-Օր » ի առաջին գլխիէն, ինչպէս անոր հրատարակութեան ժամանակ համոզեց ըզ Գարագաշեան, որ վեր վար. . . համաձայնի և անգամ մը « Նոր-Օր » ը հրատարակ նետուի. . . ինչ սոսկալի անյալողութիւն. . . նոյն իսկ յաջողութիւն ըտուածին մէջ . Լրսարան-Ընկերութեան դրամները ըստ հաճոյս յատկացնել գլխիցներու հաւաքածոյի մը. . . սատանային ջարդար աճյապէս պէտք էր որ ծակէր, դեռ կամուրջը չ'անցած. . . :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՏԱՄԱՏ ՄԱՀՄՈՒՏ ԲՈՇՍ. — Բիրա- միս թերթը հետեւալը կը գրէ Սուլթանի քեռայրին վրայ .

«Տամատ Մահմուտ բաշա հազիւ Եգիպտոս հասած, Եգիպտական կառավարութեան խնդրուեցաւ այդ քաղաքական ամբաստանեալին արտաքսումը . Բիրտանական Հիւպատոսութիւնը կը վաւերացնէր այդ խնդրանքը :

Բ. Դուռը Մահմուտ բաշա տամուտին ձեռնարկալուրը և թուրքիա խրկուիլը կը պահանջէր, ամբաստանելով զայն իբր պետութեան անդորրութեան դաւաճանող . գրութիւններով, յայտարարութիւններով և խօսքով :

Եգիպտական կառավարութիւնը գոհացում չ'տուաւ յիշեալ պահանջումին, վասնզի երկրին օրէնքը չ'պատժէր Մահմուտ բաշային վերագրուած յանցանքը և՛ հետեւաբար՝ սկզբունքով անկարելի է անհատ մը իր հայրենեաց իշխանութեան յանձնել յանցանքի մը համար, որ փախստականին ապաստանած երկրին օրինաց մէջ նախատեսուած չ'է :

Երբ Ն. Տ. Լորտ Գրոմէր Եւրոպայէն վերադարձաւ այս խնդրը դարձեալ յուշուեցաւ Բիրտանական ներկայացուցչութեան և Եգիպտական կառավարութեան մէջ :

Ն. Բ. Խտիվը, որ կը ճգնի համաձայնութեան բերել Սուլթանն ու անոր քեռայրը, բաւականացաւ հրաւիրելով այս վերջինը որ Եգիպտոսի մէջ հետու կենայ ամեն տեսակ յայտարարութենէ, բանախօսութենէ, գրութենէ կամ լրագրագետներու հետ տեսակցելէ :

— Ուրախութեամբ կը լսենք թէ՛ քաղաքիս երեւելի վաճառականներէն Տիար Գ. Է. Սէլվաճեան, Պատ. Գաղաք. Ժողովոյ անդամ՝ ընտրուած է : Տիար Սէլվաճեան Սահմանադրական զգացումներով սնած՝ կը յուսանք թէ՛ օգտակար չըջան մը պիտի բոլորէ . ուստի այժմէն կը շնորհաւորենք զինքն և յաջողութիւն կը մաղթենք :

— Անցած երկուշաբթի Գոլոմպօէն Գահիրէ հասան Արապի բաշային կինը, աղջիկը և տղան : Բաշային զաւակները անգղիներէն լեզուն խիստ լաւ կը խօսին :

ԻԿՆԱՏԻՈՍ Կ. ՍԱՐԱՑԵԱՆ

ԴԵՐՁԱԿ

ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ

Շարա Պապ - Էյ - Հասիս Թիւ 22

Կը յայտարարէ թէ՛ քանի տարիներ է վերստին անհետացած Անգղիացի վաճառական - գերձակ ԺՕՆ ԳՕԼԱՔՕԹԻ նման կարեւոր տան մը մէջ աշխատելով՝ արհեստին ամեն նրբութիւններուն կատարելագոյն հմուտ և փորձառու, այս անգամ հաստատուած է հանգուցեալ Նուպար Փաշայի Տայրախի դիմացը, նորայէն խանութներուն մէջ :

Թէ՛ իրեն դիմող երկու սեռէ Պատ. յաճախորդք ըստ ամենայնի գոհ պիտի մնան, արհեստի նրբութիւն տեսնելով, նորաձեւութեանց զանազանութիւններ գտնելով, և մանաւանդ՝ որ ամենէն կարեւորն է, շտապար վճարումներու փոխան, ձեւաւոր և ճաշակաւոր զգեստներ ունենալով :

Գ. Տեղեկագրի պարունակութիւնը կը հակասէ «Նոր Օր» թիւ 34 ի ազգային բաժնին մէջ յանձին խմբագրագետի յերիւրուած զըրպարութեանը, որ, կը շեշտէ այդ յօդուածը, Հաշուեքննիչ յանձնաժողովոյ տեղեկագրին վերայ հիմնուած է :

7. Մայր-ղիւանն ու իրեն հետ հաշուեքննիչ յանձնաժողովոյ անդամակիցները, 5 անգամ նիստ գումարելով մանրակրկիտ քննութեան մը ենթարկած են, կ'ըսէ Տ. Հ. Պէրպէրեան, հաշուեքննիչները : Այդ նիստերուն գրեթէ միշտ ներկայ էին գործ. ժողովոյ կողմէն Ատենապետն ու խորհրդական մը Տ. Ե. Գարագաշ : Քանի քանի անգամներ խնդրուեցաւ որ ձեռնադրին հեղինակը հիւանդանոցն է . ուստի պէտք է հոն դիմել այդ փոքրիկ հաշուետարին գծուարին ու մութ կէտերը պարզելու համար . այդ խնդիրը մերժուեցաւ, աւարկութեամբ Տ. Հ. Պէրպէրեանի թէ՛ պէտք չ'կար հոն դիմելու . ինք կրնար մէջէն ելնել, հոն յայտարարեց Տ. Ե. Գարագաշ թէ՛ Տ. Սմբատ Փափագեան ելից կողմը 40 զըշ. ի գումար մը նշանակած է վարչութեան կնքոյն համար, մինչդեռ ինք չէ՛ ստացած . Պատուակա՛ն գեղծում է այս, գոչեց Տ. Հ. Պէրպէրեան . Իսկ Տ. Փափագեան ըսած է թէ՛ ինք չէ՛ վճարած . բայց պիտի վճարէ . այս իրողութեանը վկայ է նոյն իսկ Տ. Առաքել Փափագեան, անդամ Յանձնախմբին :

8. Տիար Սմբատ Փափագեան, Գարտուղար Ներկայացուցիչ «Նոր Օր» ի վարչութեան որ ինչպէս գիտենք, կազմալուծեալ է, չ'ուներնալով իր Նախագահը, Արտօնատէրը, Եւրո. ո՞ր օրէնքի կրթիւթ, իր իսկ իշխանութեամբ կը հեռացնէ պաշտօնէ Տ. խմբագրագետը, որ գործադիր ժողովոյ կողմէն ընտրուած է և է միանգամայն անդամ վարչութեան ու Գաղաքական-Տնօրէն թերթին . այդ գրութեանը կը տըրուի առաջնութիւն մայր-ղիւանի կողմէն, Սեպ. 23 ի նստին մէջ . մինչդեռ խմբագրագետին պատճառաբանեալ հրաժարագիրը թերթի տակէն մըթմըթալով կը կարգայ Ատենապետը Տ. Ե. Աւագեան . այս՝ կ'ըլլայ Ընդ. ժողովոյ ներկայութեան :

Ս. ԲԻՒՐԱՏ

(Շարունակելի)

188րդ. ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ ՔԻՐԷՏԻ ՅՈՆՍԻԷ ԷՃԻԲՍԻԷՆԻ 15 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1900

Table with 5 columns of numbers: 100,000, 287,434, 27,787, 30,986, 31,357, 61,581, 68,949, 80,524, 83,383, 91,282, 98,944, 148,509, 180,026, 214,198, 234,911, 260,564, 293,448, 297,952, 306,253, 330,255, 333,503, 341,453, 348,028, 375,395, 384,065, 390,525, 397,420

(3) Քանի որ թէ՛ «Նոր-Օր» ի վարչութիւնը և թէ՛ ըստ Տ. Ս. Բիւրատի (առժամեայ) Մայր-Դիւանը լուծութիւն պահած են այս մասին, ինք՝ ամբաստանագրողը՝ պարտ էր, իբր ընկերութեան շահերուն պաշտպան, լուսաւորել իր ընկերները և հանրութիւնը, եթէ ներքին շարժառիթ մը զինքն ալ չ'էր հարկադրեք հարեանցի ակնարկ մը նետելով անցնելու, ինչպէս օր կ'ընէ : Բայց գլխաւոր վարիչներու այս ընթացքը պատճառ մը չ'կրնար ըլլալ՝ այս մասին անտարբեր ձգելու ամեն անոնք, որոնք կը շահագրգռուին «Նոր-Օր» ի գործերով : Ընկերութեան մը համար ամենամանր բեռը ծախուց առաւելութիւն և՛ հետեւաբար՝ պարտք միայն կրնայ ըլլալ . ուստի զգուշութիւն և աշարջութիւն :

2. Կովկաս եւ արտասահման՝ մինչեւ Ընդ. ժողովոյ սեպտ. 9 ի նստին օրը չ'զրկուած բոլոր թերթերը, զրկուած նշանակուած են, որուն համար ելից կողմը գրուած է 2 ոսկիի գումար մը, թղթատարութեան ծախք . մինչդեռ այդ թերթերը պէտք էր որ զրկուած ըլլային սեպտ. 2 էն առաջ :

3. Եռամսեայ հաշուեքննիչը 100 զըշ ի մուտք մը յատկացուցած է «Նոր-Օր» ի յայտարարութեանց . Տիար Փափագեան կը հաճի՞ թուել այդ մուտքի մասնագումարները, մաքէ չը հանելով սակայն յայտարարութիւն տուողներուն թիւն ու բերած հասոյթը, եթէ զեղծում չ'է՛ ասի, գոնէ սուտ է :

4. Միութիւն սպարանը հաստատուելէն ի վեր մինչեւ սեպտ. 2 սպագրուած «Նոր-Օր» ի թիւերուն հաշիւն ինչ խորհուրդով զանց առնուած է եռամսեայ հաշուեքննիչի մէջէն : Մայր-Դիւանը, եթէ կ'առաջնորդուէր ուղղակի ընկերութեան շահերէն, պարտաւոր չ'է՛ր վերջին 3 նիստերէն գոնէ մէկուն մէջ բացատրութեան մը պահանջելու այդ մասին, որպէսզի ընկերութեան բոլոր անդամները գիտնային թէ՛ «Միութիւն» սպարանը թերթին հետ առնչութիւն մը կամ պայման մ'ունի՞ թէ՛ ո՛չ, և թէ՛ ինչպէս . հաւանական չ'է՛ որ այդ կարեւոր կէտը միշտ քողարկուած թողնուի՝ սպագային ընկերութիւնը ծանր բեռի մը տակ ընկնի (2)

5. Ընդ. ժողովոյ կողմէն կարգուած Հաշուեքննիչ յանձնախումբը, որուն մէջ է առժամեայ մայր-ղիւանը, Սեպտ. 23 ի նստին մէջ Տեղեկագիր մը կը ներկայէ Ընդ. ժողովին ի դիտողութիւն կամ վաւերացում : Տեղեկագիրը, որուն հեղինակը նոյն իսկ մայր-ղիւանի Ատենապետն է, կը պարունակէ մէկէ աւելի հակասութիւններ և է միակողմանի, հետեւաբար թերի և անընդունելի . ինչ որ գիտել կուտայ Գործ. ժողովոյ Ատենապետը, Սեպտ. 23 ի նստին մէջ . դիտողութիւն՝ որ դիտողին վրայ կը հրաւիրէ ծրագրուած ու կանխորոշ յարձակում մը : Յիշեալ դիտողութիւնը կ'ընէ Գործ. ժողովոյ Ատենապետը, հարցնելով թէ՛ Գործ. ժողովոյ հաշիւներուն մէջ զեղծում կ'ա՞յ թէ՛ ո՛չ, ճշգրիտ պէտք է . մինչդեռ տեղեկագրին մէջ չ'էր ճշգրտած, ինչպէս որ տեսանք «Նոր Օր» ի 35րդ թիւին մէջ և ինչ որ լսեցինք Սեպտ. 23 նստին մէջ : Թէ՛ ինչո՞ւ միակողմանի էր :

Ա. Որովհետեւ առժամեայ Մայր-ղիւանը պատրաստած էր զայն, և հաշուեքննիչ անդամներէն ոմանք ալ չէին ստորագրած, ինչ որ պաշտօնական չ'նկատուիր (3) :

Բ. Տիար Փափագեանի՝ ծայրէ ծայր սուտ ու սխալ հաշիւները բնաւ նկատի չ'առնուած, կամ աւելի ճիշդը, քողարկուած, Գործ. ժողովոյ հաշուեքննիչ խնդրոյ առարկայ դարձած էր . մինչդեռ նոյն տեղեկագրին մէջ յիշուած է թէ՛ երկու հաշուեքննիչը ալ անկասկած էին . արդ, եթէ Գործ. ժողովը պատասխանատու է իր հաշուեքննիչ թերթեան համար, միւս հաշուեքննիչը պատրաստողն ի՞նչ է :

(2) Հարկ կ'զգանք միանգամ ընդ միշտ հոս նշանակելու որ գրութեանս մէջ շուայլուած ընդ. ժողով . լեիւս . և Մայր-Դիւան բառերը երբէք չ'են վերաբերուիր Լսարան Ընթերցատուն ընկերութեան օրինաւոր Ընդ. ժողովոյ, Մայր-Դիւանին և նիստերուն : Ինչպէս որ «Արշալոյս» ի անցած թիւերուն մէջ քանիցս շեշտուեցաւ . Ընկերութեան նախորդ Գործ. ժողովը անկարողութեամբ ազգայնոց ոմանց սարքեց գումարումներ զոր մկրտեց ընդ. ժողով կամ նիստ անուամբ, միամիտները առ ինքն յանկուցանելու համար, և միակ նպատակ ունենալով՝ փնասել ընկերութեան որ իր տասուկորս ամսեայ օրինաւոր Մայր-Դիւանով և իր նորընտիր Գործ. ժողովով անվկանդ շարունակէ իր գոյութիւնը, արհամարելով իրեն զէ՛մ եղած ամօթալի դաւադրութիւնները :

ՆԱՍԱԿ ԲԱՐԻՁԷՆ

ՅՈՒՑԱՀԱՆՆԻՍ ԵՆՈՂՆԵՐԸ

Ո՞վ կարող էր երևակայել թէ այսօր փ հայեր Բարիզ կրնան գալ ցուցահանդէսը տեսնելու, Բարիզի մի քանի թաղերուն մէջ ամեն քայլափոխից հայերու կը հանդիպուիս:

Եւ զարմանալին ո՞րն է գիտէք. շատ անգամ այդ հայուհիները իրենց տեղային զգեստներով (ազգային տարազներով) եկած են Բարիզ: Որչափ ուրախութիւն կը պատճառէ արդեօք գիտէք, հայու մը որ 10-15 ասրիններէ հետէ հայ կնոջ խօսուածքը չ'է լսեր, յանկարծ իւր քովը հայերէն խօսիլ լսէ, որչափ կ'զգածուի և ինչ տխուր մը ստածումներ չ'ունենար. այս միայն կրնայ իմանալ, երկար տարիներէ ի վեր հայրենիքէն բաժնուած պանդուխտը:

Հետաքրքիրն և միևնոյն ժամանակ զարմանալին այն է որ ցուցահանդէսի առթիւ Բարիզ եկող հայերէն շատերը կովկասէն են՝ Թիֆլիզէն, Բագուէն, Երևանէն, Շուշիէն, Բաթումէն, Սղնախէն և այլն ևն: Ուրիշներ Ռուսաստանէն՝ Բէթէրսպուրկէն, Մոսկուայէն, Սիմֆէօփոլէն ևն ևն:

Ոմանք հրաշալի գաղափարը ունեցեր են ամբողջ ընտանիքով (օլուխ չոճուխով) գալ այնպէս որ երբեմն կը հանդիպին խումբ մը մարդկանց՝ երկու սեռէ՝ որոնք հայու տիպար ունին, անտարբերութեամբ քովերնէն կ'անցնին և կը լսեն պզտիկները որ զանազան հարցումներ կ'ուղղեն իրենց ծնողաց. . . . Այն տեղ կը տեսնուին մեծ պապը, մեծ մայրը, հայրը, մայրը, թոռները, հարսները. . . . Գուցէ կը կարծէք թէ այս եկողները կովկասի մէջ իբր հարուստ յայտնի անուն ունեցողները լինին: Շատ պիտի սխալէիք: Ս. այդ յայտնի հարուստներէն մէկ քանին եկած են և կամ գուցէ եկած են, բայց մեր լսածին համեմատ, շատերը պարզ վաճառականներ են, որոց կարողութիւնը շատ մեծ չ'է, և որոնք հետաքրքրուած են Բարիզով և ցուցահանդէսով: Մոսկուայէն մի պարզ վաճառական որու հետ գիպուածով ծանօթացայ, կ'ըսէր « փող հաւաքել էնք, պէտք եղած տեղին էլ ծախսել գիտենք. ուզում ենք բան տեսնել. . . »:

Հրաշալի խօսք որ պարզ մարդու մը բերնէն ելլելով աւելի թանկագին կը դառնայ, ուր էր թէ մեր բոլոր վաճառականները միևնոյն կերպով մտածէին և վարուէին քան այս Մոսկուայի վաճառականը, որ բան մը չ'իննայիր տեղ տեսնելու, սորվելու, իւր մտքին հորիզոնը աւելի ընդարձակելու, որով կարող կը լինի իւր վաճառականութիւնն ալ ընդարձակել և ապահովել:

Մ. Ս. ԴԱԻԹ ԲԷԿ

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԱՐՇԱԼՈՅՍԻ

Հիմնաւ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԻԼ ԱԶԻԶԻ ՍԿԻԶԸ

Օտեսնիյի դեղատանին դիւնացի փողոցին մէջ:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաքուր և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ, կ'ընդունուին:

Այցեխարտեր, Շրջաբերականներ, Գիտեր, Հրախուսարտեր, Մանագրներ, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տոմսեր և այլ և այլ վաճառականական յանձնարարութիւններ:

Ամենակատարեալ ճշգրտահաշիւներ և չափաւոր գին:

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻԿ ԵՆ:

ԺԱՄԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԿՈՒՋԷՔ ՈՒՍԱՆԻԼ

Երիտասարդ մը որ երկար տարիներ ժամագործութեան արհեստին հետեւելով կատարեալ հմտութիւն ստացած է ամեն տեսակ ժամացոյցներ նորոգելու արհեստին մէջ, կ'ուզէ ունենալ ընկեր մը՝ որ վաճառատուն մը բանալու գրամագլուխ և միանգամայն քիչ ատենի մէջ արհեստը ուսանելու փափաքը ունենայ:

Արհեստաւոր երիտասարդը կը գտնուի ԳԱՅԷ ԵՓՐԱՏ ուր կրնան իրեն հետ բանակցել, անոնք որ հետամուտ են:

Կ Ա Ր Ե Ի Ո Ր Ա Ջ Դ

Նոր կեանք ի եւ Անահիտ ի Անթերի մի հաւաքածոյն ունենալ փափաքողք առիթը ձեռքէ չ'փախցնելով փութով Խմբագրատունս գիմեն, գիւրագին զայնս գնելու:

ՀՆԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ ՈՒՐԱՄԹ 19 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1900

Table with 6 columns of numbers: 849, 5264, 9829, 8822, 9178, 6246; 8245, 7234, 1623, 4263, 9611, 4042; 6690, 6223, 3006, 2121, 1856, 668; 1075, 1841, 4287, 2064, 1998, 4877; 6515, 7139, 8681

ՏՀԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԵԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԵԱՐ 437 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները:

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ինչպատ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութենէ մէկ միլեար աւելի է:

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ

ՄԻՄՆԱԲ ԵՐԲԷՔ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՅՈՅՆ

Քանի որ ՍԷԼՎԱՃԵԱՆ վաճառատան մէջ (ի Մուսքի) պիտի գտնէք միմիայն 22 ՂՐԾ ի նիքէլ, կոթէն լարուղ սիլոն ժամացոյցներ որոց լաւ բանիլը երաշխաւորեալ է: Նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժամացոյցներ 120 ՂՐԾ է սկսեալ մինչև 2500 ՂՐԾ: Ինչպէս նաև արծաթ ոսկեպատ, նիքէլ, և օքսիտէ ժամացոյցներ. պատի և քօնսօլի բազմազան Բանտիլներ և ամեն ճաշակի յարմար Գոհարեղէնք:

Ճոխ հաւաքածոյ բուն Ամերիկեան Գոնօկրաֆներու:

Ա Ջ Դ

Գրիի Օրօր գիւղի Ազգայիններէն Տիար Մարտիրոս Շանօեանի որդի Պ. Կարապետ Շանօեան 26 ամեայ երիտասարդը Հայալիջ դէպքերէն ի վեր անհետացած է և իւր Գահիրէաբնակ ազգականները կ'ուզեն գիտնալ թէ ո՞ր կը գտնուի այդ երիտասարդը:

Կը խնդրուի ուրեմն մեր Պատ. Ազգայիններէն որ եթէ գիտեն յիշեալ երիտասարդին ուր գտնուիլը կամ եթէ ո՛ր և է տեղեկութիւն ունին անոր մասին, բարեհաճին ծանուցանել Արշալոյս ի Տնօրինութեան:

Նոյնպէս կը խնդրուի մեր Արտասահմանի Պատուարժան պաշտօնակիցներէն, որ շնորհ ընեն ներկայ ազգարարութիւնը կրկնել իրենց թերթերուն մէջ. ի հարկին նրմանօրինակ ծառայութիւններ սպասելով մեզմէ:

Ա. Պ Ա Լ Ե Ա Ն

Մ Ա Թ Ի Լ Տ

(Գաղթականաց կեանքէն)

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԴԻՄԵԼ ԹԵՐԹԻՍ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

ՀԱՒԱՔԱԾՈՑ

ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ

ՏՆՕՐԷՆ Լ. ԵՂԱԶԱՐԵԱՆՑ — ԲԱՐԻՁ

Ականաւոր և հեղինակաւոր երաժիշտներու ալակցութեամբ եռաձայն և քառաձայն պատրաստուած սոյն հաւաքածոյն գինը փափաքողներն կամ բաժանորդսպրուիլ ուզողներն, կրնան գիմել՝ Արշալոյս ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ Հիմնադիր-Տնօրէնին:

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապուրակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գանձէ:

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՕՆ գլխաւոր գործաւ կատար յԱզգ. քսանդրիա: